

Վայրի բնություն՝ կենդանիներ և բույսեր



Ներկա իրավիճակը

- Ծրագրի տեղամասը հարուստ է կենսաբազմազանությամբ, այդ թվում՝ որոշ վտանգված տեսակներով: Ելակետային տվյալներ հավաքելու նպատակով, Լիդիանը համագործակցում է մի շարք միջազգային խորհրդատուների, տեղական ինստիտուտների և փորձագետների հետ:
- Ուսումնասիրությունների արդյունքում Ծրագրի ենթակառուցվածքների և դրանց ազդեցությունից դուրս տարածքներում հայտնաբերվել են Հայաստանի Կարմիր գրքում գրանցված երկու տեսակի օձեր, երկու տեսակի բզեզներ, մեկ տեսակի թիթեռ, մեկ տեսակի գորշ արջը և առնվազն 14 տեսակի թռչուններ:
- Կարմիր գրքում գրանցված ալպիական բույսը Մատնունի ծիրանավորը, աճում է Ծրագրով նախատեսված բացահանքերի և դրանց առնչվող հանքատար ճանապարհների տարածքում:



Որո՞նք են հնարավոր խնդիրներն ու ազդեցությունները

- Շինարարության արդյունքում անհետանալու է որոշ քանակությամբ բուսականություն: Որոշ տեսակներ կորցնելու են իրենց բնական կենսամիջավայրը, իսկ մնացած միջավայրերը որակի առումով, ենթադրաբար կենթարկվեն ծրագրի ազդեցության:
- Որոշ արհեստական խոչընդոտների, մասնավորապես՝ փոխակրիչի, պարիսպների ու ճանապարհների տեղադրումը, կիսաթափի ցամաքային կենդանիների բնականոն տեղաշարժը: Տեղական կենդանական աշխարհը կարող է նայնպես ենթարկվի որոշակի ազդեցության ստորերկրյա հոսքերի փոփոխությունների արդյունքում:

Հավանական ազդեցությունների կառավարմանն ուղղված Ընկերության քայլերը

- Լիդիանը պարտավորվում է երկարաժամկետ հեռանկարում և միջազգային չափանիշներին համապատասխան ապահովել զրոյական գուտ վնաս բնական կենսամիջավայրերի մասով, ինչպես նաև “կրիտիկական կենսամիջավայրերի” որակի բարելավում:
- Բնական տեսակների, այդ թվում՝ *Մատնունի ծիրանավոր* տեսակի կենսունակ պոպուլյացիայի և *Գորշ արջի* կենսամիջավայրի պահպանման համար նախատեսվել է հատուկ տարածք Ամուլսար լեռան վրա:
- Բացահանքերի տարածքում աճող *Մատնունի ծիրանավոր* բույսը նախատեսվում է տեղափոխել կառավարության որոշմամբ սահմանված այլ վայր: Իրականացվում է մեծ հետազոտական ծրագիր:
- Ծրագրի ողջ ընթացքում նախատեսվում է իրականացնել շարունակական մշտադիտարկում:
- Բուսականության վերականգնումն ու ստեղծված խոչընդոտների վերացումը հնարավորություն կտա վերականգնել բնական պոպուլյացիաները հանքի փակումից հետո:

Որ ազդեցություններն են լինելու հարատև

- Վերականգնման ջանքերից անկախ, բույսերի և կենդանիների որոշ պոպուլյացիաների կողմից կրած փոփոխությունները լինելու են հարատև: Երկարաժամկետ հեռանկարում բուսականության և կենսամիջավայրերի մասով զրոյական գուտ վնաս ապահովելու նպատակով, Լիդիանը նախատեսում է կենսաբազմազանության պահպանմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

